Հաստատեմ
Ն. Հովհաննիսյան
31.08.2023թ.

2022-2023 ուստարվա II կիսամյակի տնտեսական աշխատանքների գծով փոխտնօրենի

Հաշվետվություն

1. 2022-2023 ուստարվա 01.01.2023-ից, մինչև օգոստոսի 31-ի դրությամբ վերանորոգվել են դպրոցի բոլոր դասասենյակների վնասված սեղան-աթոռները(զամասկա,շուշաթղթում,շուռուպներ,սոսինձ,յուղաներկ):

2. Վերանորոգվել է ուսուցչանոցի մաշված հատակը, սվաղվել է 3 քառակուսի մետր, օգտագործվել է ցեմենտ, ավազ: Հատակին ամրացվել է 6,5×6 քառակուսի մետր լինոլեում(սոսինձ,շրիշակներ համապատասխան չափերով, շուռուպ, դյուբել): Վերանորոգվել է ուսուցչանոցի նիստերի սեղանը:

3. Մասնակի քանդվել է մեծ մասանշենքի 2-րդ և 3-րդ հարկերի հատակը, մանրահատակը մաքրվել է: Վնասված, ճաքած հատվածներում արվել է ամրացնող սվաղ: Սվաղ է արվել նաև դպրոցի մեծ և փոքր մասնաշենքերի դասասենյակների պահանջվող տեղերում:

4.Կառնիզներ են փակցվել Ն. Գ.-Ի կաբինետում՝ 12 մետր, փոքր մասնաշենքի միջանցքում՝ 6 մետր:

5.ՈՒսուցչանոցում և խոհանոցում փոխվել են վնասված հոսանքի լարերը, տեղադրվել են 4 վարդակներ:

6.Դպրոցի հետնամուտքի դարպասների մոտ և կաթսայատանը դրվել են լեդ լամպեր: Օգտագործվել է 30 մ հոսանքալար:

7.Փոքրերի մասնաշենքի ·IV^{ա} դասարանում փակցվել են կախիչներ (կախիչ, հենափայտ, շուռուպ, դյուբել):

8.Ներկվել են սև ներկով 5 մաշված գրատախտակ, սեյֆ(շուշաթուղթ, լուծիչ, վրձին և ռոլիկ):

9.Ամրացվել է Վիլյամ Սարոյանի լսարանի մուտքի դուռը:

10.Փոխել են 4 դասարանի մուտքի փականները և միջուկները:

11.Ամրացման աշխատանքներ են արվել Հայրապետյանի դասղեկական դասարանի գրատախտակի հիմքում(շուռուպ, դյուբել, փայտ):

12.Դպրոցական շենքի սանիտարահիգիենիկ վիճակը ապահովելու համար հավաքարարներին բաշխվել է պահանջվող բոլոր տեսակի մաքրվող նյութերը և մաքրման պարագաները(տես հաշիվ ապրանքագրերում):

Ժամանակային գրաֆիկով յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրերին թարմացրել եմ հեղուկ ձեռքի օճառների և ախտահանիչ նյութերի համար նախատեսված պատերին

փակցված տարաները: Ամեն աշխատանքային օր սանհանգույցներում տեղադրել եմ 5 զույգ զուգարանի թուղթ և աղբամանները թարմացրել եմ աղբի տոպրակներով:

13. Սեպտեմբերի 1-ի նախապատրաստական կարևոր աշխատանքներից է բակի մաքրությունը, իրականացվել է խոտհունձ, հավաքում, այրում, աղբի մաքրում:

14. Դասարաններում ցերեկային լույսերի փոփոխում: Միջանցքների այրված լամպերի փոխում: Տանիք.ազբոշիֆերների մասնակի վերանորոգում: Լվացել ենք ընդունարանի 2 գորգը:

Դասասենյակները, նախասրահները, պատուհանները, պատերը, վարագույները մաքրվել են անհրաժեշտ համապատասխան մաքրման նյութերով և պարագաներով:

Օգոստոսի 30-ին դպրոցը պատրաստ է եղել սանիտարահիգիենիկ բոլոր նորմերին համապատասխան :

Տնտեսության մասով փոխտնօրեն՝ / / Ն. Ավագյան